ՎԱՐԴԱՎԱՌԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Վերջերս տեղի ունեցաւ Վարդավառի տօնակատարութիւնը Արցախում։ Չնայած, որ նախատեսուած էր տօնակատարութիւնը անցկացնել Արցախի թեմի բոլոր եկեղեցիներում, այն տօնուեց միայն Գանձասարում. Ամարասի վանքը աւերուել էր ազերիների կողմից։

Ինչպէս գրում է «Խորհրդային Ղարաբաղ»ը, Վարդավառը տօնուեց նաեւ Ստեփանակերտի թիւ 5 մանկապարտէզում։ Հայ մանուկները ներկաներին նուիրեցին օծուած վարդեր, մեծ ուրախութեամբ ողջունեցին Անահիտ աստուածամօր «յայտնութիւնը» դահլիճում, որը երեխաների վրա ցանեց «սուրբ» ջուր։

Տօնակատարութեան աւարտին մանուկների կատարմամբ հնչեցին հայրենասիրական երգեր, կատարուեցին ազգային պարեր։